ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԻՋԱՆՑԿՅԱԼ ՀԱՇՎՏԵՎՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5, հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ unibank@unibank.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 4, 23 հունվարի 2016

Արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 158,923,776 հատ

Արժեթղթերի դասը՝ արտոնյալ հաստատագրված բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 32,010,000 հատ

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 100 ՀՀ դրամ

Ստորագրող անձինք՝

Զաքար Բոյաջյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ - ռիսկերի կառավարման տնօրեն**		23.01.2017թ
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**		23.01.2017թ
Դավիթ Պետրոսյան	**Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		23.01.2017թ
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահի տեղակալ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի գծով տնօրեն**		23.01.2017թ
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**		23.01.2017թ
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության նախագահի տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		23.01.2017թ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 31.12.2016	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2015
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	31,187,792	23,506,791
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	13.1	56,073	52,343
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	5,902,644	3,751,886
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	118,123,763	110,181,548
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	14,399,954	4,411,861
1.7	Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	17.1		4,136,760
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.9	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19		
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	9,031,814	6,479,390
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.12	Կանխավճար շահութահարկի գծով	21.1		284,081
1.13	Այլ ակտիվներ	21	7,792,435	5,335,200
	Ընդամենը՝ ակտիվներ		**186,494,475**	**158,139,860**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	5,007,634	22,255,512
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	131,171,144	104,170,724
2.3	Փոխառություն	23.1	10,131,243	7,511,491
2.4	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	2,652,531	
2.5	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25		
2.6	Վճարվելիք գումարներ	26		
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,118,886	731,041
2.8	Պահուստներ	30		
2.9	Այլ պարտավորություններ	27	701,178	762,000
	Ընդամենը՝ պարտավորություններ		**150,782,616**	**135,430,768**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	19,093,378	14,167,947
3.2	Էմիսիոն եկամուտ		7,790,481	1,387,422
3.3	Պահուստներ՝		1,342,530	(70,833)
3.3.1	Գլխավոր պահուստ		426,482	421,851
3.3.2	Վերագնահատման պահուստներ		916,048	(492,684)
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		7,485,470	7,224,556
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		**35,711,859**	**22,709,092**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**186,494,475**	**158,139,860**

Բանկի վարչության նախագահ (գլխավոր տնօրեն) ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԻ

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2017թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.16_31.12.16	Նախորդ ժամանակաշրջան 01.01.15_31.12.15
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	664,809	(468,167)
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	(132,962)	93,633
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**531,847**	**(374,534)**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**957,441**	**118,704**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Բանկի վարչության նախագահ ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2017թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.10.16_31.12.16	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.16_31.12.16	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան (ստուգված) 01.10.15_31.12.15	Նախորդ ժամանակաշրջան 01.01.15_31.12.15 (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,496,576	18,380,506	4,523,711	18,686,314
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(3,208,596)	(12,968,926)	(3,252,631)	(13,431,361)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**1,287,980**	**5,411,580**	**1,271,080**	**5,254,953**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,182,694	3,986,031	861,885	2,362,997
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(90,744)	(322,108)	(81,069)	(284,420)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**1,091,950**	**3,663,923**	**780,817**	**2,078,577**
Եկամուտ շահաբաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	129,016	416,442	305,506	857,404
Այլ գործառնական եկամուտներ	6	(62,546)	860,698	318,500	1,021,779
Գործառնական եկամուտներ		**2,446,400**	**10,352,643**	**2,675,903**	**9,212,713**
Զուտ մասհանումներ ակտիվների հնաբավոր կորուստների պահուստներին	7	(1,024,566)	(3,421,026)	(1,517,284)	(2,347,929)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(814,340)	(3,088,342)	(766,151)	(3,048,069)
Այլ գործառնական ծախսեր	9	(795,480)	(3,243,717)	(779,445)	(3,037,856)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				824
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**(187,986)**	**599,558**	**(386,977)**	**779,683**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(9,051)	(173,964)	19,315	(286,445)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		**(197,037)**	**425,594**	**(367,662)**	**493,238**
Հաշվարկված շահաբաժիններ			160,050		
Չբաշխված շահույթ		**(197,037)**	**265,544**	**(367,662)**	**493,238**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ					
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության **վավերացման ամսաթիվը** 14.01.2017թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 31.12.2015	Հաշվետու ժամանակաշրջան 31.12.2016
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**4,327,174**	**4,520,880**
Ստացված տոկոսներ		15,466,590	16,091,062
Վճարված տոկոսներ		(13,057,603)	(13,488,661)
Ստացված կոմիսիոն գումարներ		2,364,773	3,986,029
Վճարված կոմիսիոն գումարներ		(284,420)	(322,108)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		911,615	1,268,387
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		724,109	598,197
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		2,825,849	1,293,810
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(3,125,335)	(3,054,177)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(1,498,404)	(1,851,659)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		**(3,160,948)**	**3,817,387**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		1,252,091	(19,758,319)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)		5,467,031	(14,093,294)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(3,855,899)	(5,851,333)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)			
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		(359,041)	186,308
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		(4,413,039)	23,575,706
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		(3,511,612)	23,730,417
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(901,427)	(154,711)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**1,166,226**	**8,338,267**
Վճարված շահութահարկ			
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**1,166,226**	**8,338,267**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(159,908)	(101,877)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(124,556)	(1,801,648)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		304,335	(313,215)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(800,272)	(1,279,630)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**(780,401)**	**(3,496,370)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ		(297,323)	(246,847)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(1,871,396)	
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(4,554,277)	(11,997,475)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		(3,843,882)	1,300,233
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)			2,652,531
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		2,454,669	11,328,490
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**(8,112,209)**	**3,036,932**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(297,177)	(127,235)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(8,023,561)**	**7,751,594**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	**34,036,384**	**26,012,823**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	**26,012,823**	**33,764,417**

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2017թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ: Լրամշակված բաժնետոմսեր	Կանոնադրական կապիտալ: Հայտարարագրված բաժնետոմսեր	Կանոնադրական կապիտալ: Ընդամենը	Էմիսիոն եկամուտ/(ծախս)	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնություններից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման արդյունք	Դրամական հոսքերի ներգրավումներ	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/ անցյալ տարվա վնաս	Միջանկյալ շահաբաժիններ	Ընդամենը	Ծախսերի հետ ուղղակի կապված	Ընդամենը սեփական կապիտալում
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա հաշվետվության միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (1 աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի -2015-թ. (առուգված/չստուգված)	13,100,700		13,100,700		370,137		(539,186)		384,411	7,120,787				20,436,849
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և հական սխալների ճշգրտումը														-
2. Վերահաշվարկված մնացորդը														-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	1,067,247		1,067,247	1,387,422										2,454,669
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,067,247		1,067,247	1,387,422										2,454,669
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և չրջաառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
4. Համապարփակ եկամուտ														-
5. Շահաբաժիններ										(202,998)				(202,998)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝					51,715		(374,534)		36,625	306,766				20,572
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					51,715					(51,715)				-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում									36,625					36,625
7.5. Սեփական կապիտալի այլ տարբերի ներքին շարժեր							(374,534)			358,481				(16,053)
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա հաշվետվության միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբեր 2015 թ. (առուգված/չստուգված)	14,167,947	-	14,167,947	1,387,422	421,852	-	(913,720)	-	421,036	7,224,555	-	-	-	22,709,092

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016 թ. (առաջված/չառաջված)	14,167,947	-	14,167,947	1,387,422	421,851	-	(913,720)	-	421,036	7,224,556	-	-	-	22,709,092
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների բացահայտ արդյունքը և նախկին սխալների ճշգրտումը														
10.Վերահաշվարկված մնացորդը														
11. Բաժնետոմսերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	4,925,431		4,925,431	6,403,059										11,328,490
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, վայրերի) հաշվին			-											-
12. Այլ համապարփակ եկամուտ														
13. Շահաբաժիններ														-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝					4,632		531,847		876,885	260,914				1,674,278
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					4,632					(4,632)				-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
15.3. Լձիսիոն վնասի ծածկում														-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում									876,885					876,885
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							531,847			265,546				797,393
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբեր 2016թ.	19,093,378	-	19,093,378	7,790,481	426,483	-	(381,873)	-	1,297,921	7,485,470	-	-	-	35,711,860

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) ՎԱՐԴԱՆ ԱՓԱՅԱՆ
Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվ՝ 14.01.2017թ.

ԿՏ

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը: Ներկայումս Յունիբանկը ներկայացված է գլխամասային գրասենյակով, 46 մասնաճյուղերով և 54 պրոմո կետերով: Բանկը սպասարկում է ավելի քան 322 հազար հաճախորդ, իսկ 3.5 հազար փոքր և միջին ձեռնարկություններ ընտրել են բանկը՝ որպես ֆինանսական գործընկեր: Բանկին վստահել են ավելի քան 24 հազար ավանդ: Յունիբանկի մանրածախ վարկերի քանակը գերազանցում է 191 հազարը:

2016թ.-ի չորրորդ եռամսյակում Յունիբանկը գրանցել է դրական ֆինանսական արդյունքներ գործունեության բոլոր հիմնական ուղղություններով և շարունակել է շահույթի աճը: Բանկի ակտիվները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 186 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ մոտ 151 մլրդ ՀՀ դրամ: Բանկը շարունակել է ակտիվ աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին՝ ձգտելով մեծացնել տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալները:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:
Վինտաժային վերլուծությունները, ստրես տեստավորումները, ներքին և արտաքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները թույլ են տալիս ժամանակին բացահայտելու և կառավարելու Բանկին բնորոշ ֆինանսական և գործառնական ռիսկերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 12.10.2016թ դրությամբ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տեղաբաշխված ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսերից հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժինը (free flqat) կազմում է 15.8054-%, հետևաբար տվյալ բաժնետոմսերը բավարարում են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ով սահմանված Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակի պահանջներին, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի խորհուրդը 10.10.2016 թվականին որոշում է ընդունել իր կողմից տեղաբաշխված ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսերը Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակից Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ տեղափոխելու վերաբերյալ:

17.10.2016թվականին բորսայական առևտրի արդյունքում տեղի ունեցավ Բանկի խոշոր բաժնետիրոջ փոփոխություն: Այժմ Բանկի խոշոր բաժնետեր է հանդիսանում Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ ընկերությունը (85.6%) (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103):

«Յունիբանկ» ԲԲԸ-ն Գերմանա-հայկական հիմնադրամի և գերմանական KfW բանկի հետ համատեղ սկսեց բիզնես վարկավորման նոր ծրագիր՝ ուղղված ձեռնարկությունների էներգաարդյունավետության բարձրացմանը: Ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն ոչ միայն ստանալ բիզնես վարկեր շահավետ պայմաններով, այլ նաև՝ էապես կրճատել ձեռնարկության էներգածախսերը:

2016թ.-ի նոյեմբերի 23-ից «Յունիբանկ» ԲԲԸ-ն սկսեց անվանական արժեկտրոնային պարտատոմսերի երկրորդ թողարկումը: Դրամային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը կազմեց 13.5%, շրջանառության ժամկետը՝ 24 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ: Թողարկման ծավալը կազմեց 250 մլն ՀՀ դրամ, ինչը ներառում է յուրաքանչյուրը 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 25 000 հատ պարտատոմս:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն սկսեց բաժնետոմսերի նոր թողարկում, որը ևս իրականացվեց «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում: Առաջարկի արդյունքում բանկը նախատեսում էր տեղաբաշխել սովորական դասի մոտ 17,4 մլն բաժնետոմս, որոնց ընդհանուր արժեքը տեղաբաշխման գնով կկազմի մոտ 4 մլրդ ՀՀ դրամ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 ՀՀ դրամ, տեղաբաշխման գինը՝ 230 ՀՀ դրամ: Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում իրացվեց ծավալի ավելի քան 80%-ը, որը կազմում է 3.3 մլրդ ՀՀ դրամ: 2016թ.-ի երրորդ եռամսյակի արդյունքներով, «Յունիբանկի» ընդհանուր կապիտալը գերազանցեց 31 մլրդ ՀՀ դրամը, ակտիվները կազմել են մոտ 175 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 143 մլրդ ՀՀ դրամ:

09.12.2016 Դեկտեմբերին Աթենքում կայացավ «Ապագայի բանկ 2016» միջազգային համաժողովը, որում Յունիբանկը ճանաչվեց «Տարվա գործընկեր»: Համաժողովը, որին մասնակցեցին ֆինանսական և բանկային համակարգի 200 ներկայացուցիչներ ԱՊՀ, եվրոպական և ասիական երկրներից, նվիրված էր վճարային համակարգերի, դրամական փոխանցումների և նորամուծությունների ոլորտներին:

13.12.2016 «Յունիբանկիե Խորհուրդը 2016թ.-ի դեկտեմբերի 9-ի նիստում որոշում է ընդունել բանկի սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին վճարել միջանկյալ շահութաբաժիններ ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով՝ 4348 հատ /տեղաբաշխման ժամանակ ձեռքբերման նվազագույն փաթեթի քանակ/ բաժնետոմսի դիմաց 420 բաժնետոմս հաշվարկով, որը համարժեք է 13% տարեկան եկամտաբերությանը: Այս որոշումն ընդունվեց՝ ելնելով «Յունիբանկի» արձանագրած բարձր ցուցանիշներից, կայուն ֆինանսական վիճակից և զարգացման ռազմավարությունից: Շահութաբաժինները կվճարվեն բանկի

կուտակված շահույթից, որն այս տարվա նոյեմբերի 30-ի դրությամբ գերազանցել է 7,2 մլրդ ՀՀ դրամը: Շահութաբաժինները կվճարվեն սովորական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք 28.11.2016թ. դրությամբ ընդգրկված են բանկի բաժնետերերի ռեեստրում: Բաժնետոմսերի տեսքով շահութաբաժինների վճարման համար բանկը իրականացրեց սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ բաժնետոմսի շուկայական արժեքով մոտ 3,2 մլրդ ՀՀ դրամ ծավալով: Դրա հետ կապված 2017թ.-ի հունվարի 17-ին գումարվեց «Յունիբանկի» բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ հեռակա քվեարկության կարգով Բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու նպատակով:

13.01.2017 2016թ.-ի արդյունքներով Յունիբանկն անցավ PCI DSS (PCI Data Security Standard) ստանդարտի պահանջներին համապատասխանության սերտիֆիկացիոն աուդիտը և ստացավ PCI DSS 3.2 հավաստագիր: PCI DSS-ը տվյալների անվտանգության լավագույն ստանդարտներից է, որը մշակվել է միջազգային վճարային համակարգերի կողմից՝ նպատակ ունենալով կատարելագործել քարտերի միջոցով իրականացվող գործարքների պաշտպանության տեխնոլոգիան:

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի

բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում: Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, իրացվելիության ռիսկի և շուկայական ռիսկի, ընդ որում, վերջինս ենթաբաժանվում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Բանկը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի հսկողության անկախ գործընթացը չի ներառում բիզնեսի հետ կապված ռիսկերը, ինչպիսիք են փոփոխվող միջավայրը, տեխնոլոգիան և արդյունաբերությունը: Դրանք հսկվում են Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Բանկի կայունության վրա ազդեցություն են գործում էկզոգեն և էնդոգեն գործոններ, որի արդյունքում էլ Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում առաջնորդվում է ռիսկերի հետևյալ դասակարգումից.

Խումբ	Ռիսկի դաս	Ռիսկի տեսակ
Արտաքին ռիսկեր	Գործարար ռիսկեր	Շուկայական /կամ մրցակցային/ ռիսկ Իրավական ռիսկ Գործարար քաղաքականության ռիսկ Ֆինանսատնտեսական ինֆրակառուցվածք /կամ համակարգային ռիսկ/
	Արտառոց ռիսկեր	Քաղաքական ռիսկ Ֆինանսական «ճգնաժամից» վարակվելու ռիսկ Բանկային ճգնաժամի ռիսկ Այլ էկզոգեն ռիսկեր
Ներքին ռիսկեր	Գործառնական ռիսկեր	Գործարար ռազմավարության/կամ ռազմավարական/ ռիսկ Ներքին համակարգերի և գործարքների ռիսկ Տեխնոլոգիական ռիսկ Կառավարչական սխալներ և մեքենայություններ
	Ֆինանսական ռիսկեր	Հաշվեկշռի կառուցվածք Եկամուտների և ծախսերի հաշվետվության կառուցվածք Կապիտալի համարժեքություն Վարկային ռիսկ Իրացվելիության ռիսկ Տոկոսադրույքի ռիսկ Շուկայական/գնային/ ռիսկ Արտարժութային ռիսկ

Բանկը, հանդիսանալով օրենսդրորեն կառավարվող, ինչպես նաև Ֆինանսատնտեսական համակարգի մաս կազմող սուբյեկտ, կրում է արտաքին գործոններով պայմանավորված ռիսկեր:
Գործարար ռիսկերը պայմանավորված են Բանկային բիզնեսի արտաքին միջավայրով, այդ թվում մակրոտնտեսական և քաղաքական գործոններով, իրավական դաշտի պայմաններով, ինչպես նաև ընդհանուր ֆինանսատնտեսական համակարգի կառուցվածքով:

- Շուկայական կամ մրցակցային ռիսկը առաջանում է բանկային ծառայությունների շուկայում Բանկի մրցակիցների առավել ակտիվ գործունեությամբ, կարող է անդրադառնալ Բանկի մրցակցային առավելությունների, հաճախորդային բազայի և շահույթի վրա:
- Իրավական ռիսկը առաջանում է բանկային օրենսդրության, հարկային օրենսդրության և այլ իրավական ակտերի ու կանոնակարգերի փոփոխության արդյունքում: Այդ փոփոխությունների արդյունքում Բանկը իր մրցակիցների նկատմամբ կարող է հայտնվել առավել ոչ շահեկան դիրքերում, ինչն էլ իր հերթին կարող է առաջացնել մրցակցային ռիսկեր:
- Գործարար քաղաքականության ռիսկերը առաջանում են գործարար միջավայրում կատարվող փոփոխությունների արդյունքում /ոչ արդար մրցակցություն, հովանավորչություն, դեմպինգ/ , ինչի հետևանքով Բանկը կարող է հայտնվել ոչ շահեկան միջավայրում:
- Ֆինանսատնտեսական ռիսկերը առաջանում են ֆինանսատնտեսական համակարգի /օրինակ փոխանցումային համակարգի/ անկատար լինելու պատճառով, որի հետևանքով Բանկը կարող է հայտնվել ոչ շահեկան դիրքերում:
- Արտառոց ռիսկերը ներառում են բոլոր էկզոգեն տեսակի ռիսկերը, որոնց ի հայտ գալը կարող են վտանգ պարունակել Բանկի գործունեության համար, կամ վատացնել նրա ֆինանսական դրությունը ու կապիտալը:
- Քաղաքական ռիսկերը ի հայտ են գալիս, երբ Բանկը ցանկանում է միջոցներ տեղաբաշխել կամ ներգրավել այլ երկրներում, սակայն հաշվի չի առնում տվյալ երկրի օրենսդրությունը, քաղաքական իրավիճակը և այլն, որի արդյունքում Բանկը հնարավոր է կրի ֆինանսական կորուստներ:
- Ֆինանսական ճգնաժամից «վարակվելուե ռիսկը ի հայտ է գալիս համաշխարհային, ռեգիոնալ կամ տվյալ երկրում առկա ֆինանսական ճգնաժամի արդյունքում, որի արդյունքում Բանկի մոտ կառաջանան վարկային, իրացվելիության, շուկայական/գնային/ ռիսկեր, ինչը բացասաբար կանդրադառնա Բանկի ֆինանսական դրության վրա:
- Բանկային ճգնաժամի ռիսկը առաջանում է, երբ համակարգի մեկ կամ երկու բանկ հայտնվում են սնանկացման եզրին, որի արդյունքում կորում է հավատը Բանկային համակարգի նկատմամբ, և Բանկերի մոտ անխուսափելիորեն առաջանալու է իրացվելիության և շուկայական ռիսկեր:
- Այլ էկզոգեն ռիսկերը հիմնականում առաջանում են ֆորս մաժորային իրավիճակներում՝ պատերազմ, երկրաշարժ, հեղափոխություն և այլն:
- Ներքին գործոններով պայմանավորված ռիսկերն առաջանում են հիմնականում ներքին պրոցեսների, համակարգերի անկատարության, աշխատակիցների սխալների կամ որակավորման ցածր մակարդակի, ակտիվների և պասիվների սխալ կառավարման և այլ ներքին գործոնների պատճառով:
- Գործառնական ռիսկերը կախված են Բանկի ընդհանուր ռազմավարությունից, Բանկի կառուցվածքից, ներքին համակարգերի /ներառյալ համակարգչային և այլ

տեխնոլոգիաները/ ֆունկցիոնալությունից, Բանկի քաղաքականության և ընթացակարգերի համաձայնեցվածությունից, կառավարման սխալներից և մեքենայություններից խուսափելուն ուղղված միջոցառումներից:

- Ռազմավարական ռիսկն առաջանում է, երբ Բանկն ընտրում է ոչ իրատեսական ռազմավարություն, որը համահունչ չէ Բանկային ծառայությունների շուկայում գործող իրավիճակին ու կանոններին, հստակ սահմանումներ տրված չեն, հստակ նպատակներ նշված չեն:
- Ներքին համակարգերի և գործարքների ռիսկն առաջանում է, երբ Բանկում հստակ սահմանված չեն լինում աշխատողների պարտականությունները, պատասխանատվությունները, հստակ չեն լինում գործողությունների ընթացակարգերը, որոնց արդյունքում էլ առաջանում է ֆինանսական կորուստների ռիսկ:
- Տեխնոլոգիական ռիսկերն առաջանում են տեխնոլոգիական միջոցների անկատար, ոչ ժամանակակից և գործարքներ կատարելու համար ոչ պիտանի լինելուց, ինչը Բանկին կարող է նյութական վնասներ հասցնել
- Կառավարչական սխալների և մեքենայությունների ռիսկն առաջանում է, երբ Բանկում առկա չէ կառավարման արդյունավետ կոլեգիալ համակարգ, համապատասխան հանձնաժողովներ, կոմիտեներ, ներքին հսկողության համակարգ, որի արդյունքում Բանկը կարող է ֆինանսական վնասներ կրել:
- Ֆինանսական ռիսկերը Բանկի հիմնական գործունեության ընթացքում առաջացող ռիսկերն են, որոնք վերաբերվում են զուտ բանկային գործունեությանը:
- Հաշվեկշռի կառուցվածք՝ ռազմավարական ծրագրով նախատեսված սխալ հաշվեկշիռը կամ գործունեության ընթացքում ոչ համարժեք հաշվեկշիռ ունենալը, ակտիվների և պասիվների կառավարումը կարող են հանգեցնել ֆինանսական կորուստների,
- Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ Գնագոյացման ոչ ճիշտ քաղաքականությունը, սպասվելիք եկամուտների ոչ ճիշտ կանխատեսումը, բյուջետային ծախսերի կառավարման ոչ ճիշտ քաղաքականությունը, հարկային ոչ ճիշտ քաղաքականությունը կարող են հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը,
- Վարկային ռիսկը փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացումն է, որի հետևանքով անհնար է դառնում պարտավորությունների կատարումը և առաջանում է վարկը չվերադարձնելու ռիսկ,
- Իրացվելիության ռիսկն առաջանում է, երբ Բանկը չի կարողանում կատարել իր պարտավորությունները հաճախորդների, կոնտրագենտների նկատմամբ, առանց վատթարացնելու իր ֆինանսական վիճակը
- Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններից,
- Շուկայական /գնային/ ռիսկն առաջանում է ֆինանսական շուկայում ֆինանսական գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխություններից,
- Արտարժութային ռիսկն առաջանում է արտարժույթների փոխարժեքների անբարենպաստ փոփոխություններից:

Ռիսկերի տարբեր տեսակների կառավարման համար Բանկը կարող է օգտագործել հետևյալ գործիքակազմը.

- Մոնիտորինգ
- Ռիսկերի միաձուլում
- Ռիսկերի վերաբաշխում
- Սահմանափակումներ
- Հեջավորում
- Դիվերսիֆիկացում
- Սցենարների վերլուծություն /ստրես տեստեր/

Որպես ռիսկերի կառավարման գործիք մոնիտորինգը ենթադրում է ռիսկի մեծության հաշվարկ, ժամանակի ընթացքում նրա դինամիկան և փոփոխության պատճառները: Մոնիտորինգը նախորդում է մյուս բոլոր գործիքների օգտագործմանը, թույլ է տալիս մշակել ինֆորմացիայի հավաքագրման տեխնոլոգիաներ, հաշվել ռիսկի մեծությունը, կատարել նրա դինամիկայի վերլուծությունը, ինչպես նաև պատրաստել համապատասխան հաշվետվություններ: Մոնիտորինգը իրականացվում է պարբերաբար:

Ռիսկի միաձուլումը մի մեթոդ է, որն ուղղված ռիսկի նվազեցմանը, և որի հետևանքով չնախատեսված վնասները փոխարինվում են հարաբերականորեն ոչ մեծ հաստատուն ծախսերով:

Ռիսկի վերաբաշխումը մի մեթոդ է, որի դեպքում հավանական վնասի ռիսկը բաշխվում է մասնակիցների մոտ այնպես, յուրաքանչյուրի կրած վնասները լինեն հարաբերականորեն ոչ մեծ:

Գործարքների սահմանափակման մեթոդը ենթադրում է կիրառել սահմանափակումներ ռիսկերի մեծության վրա, ինչպես նաև հետագայում հսկողություն իրականացնել դրանց կատարման վրա: Սահմանափակման մեծությունը ցույց է տալիս Բանկի պատրաստակամությունը առանձին ռիսկ կրելու հարցում, սակայն համապատասխան բիզնես-կառուցվածքի վրա ավելորդ ռիսկ չգցելու պայմանով: Սահմանափակման մեթոդը կիրառելուց առաջ պետք է մանրամասն մշակել ստրատեգիական փաստաթղթեր / օպերատիվ ծրագրեր, իրավական ակտեր, կարգեր/, որտեղ պետք է հստակ նշված լինի ռիսկի թույլատրելի սահմանը բանկային գործունեության յուրաքանչյուր բիզնես-ուղղության վերաբերյալ, ինչպես նաև հստակ վերաբաշխել աշխատակիցների գործառույթներն ու պատասխանատվությունը: Սահմանափակումների չափի վերանայումներ տեղի են ունենում պարբերաբար, ինչպես նաև հատուկ դեպքերում /հարկ եղած դեպքում/: Սահմանափակումներ պետք է կիրառվեն Վարկային տնօրինության, շուկայի սեգմենտների, կոնտրագենտների վրա:

Հեջավորումը ենթադրում է գրավել հակառակ դիրք արդեն իսկ գործող դիրքին /օրինակ՝ արտարժութային/, պայմանով, որ այդ համապատասխան ֆինանսական գործիքների միջև գոյություն ունի հստակ կոռելյացիա: Հեջավորման ժամանակ Բանկը պետք է հաշվի առնի նոր առաջացող ռիսկերը:

Դիվերսիֆիկացիան ենթադրում է ակտիվների այնպիսի պորտֆելի ստեղծում, որոնց գծով եկամուտները թույլ են փոխազդում միմյանց վրա:

Սցենարների վերլուծությունը /ստրես տեստեր կամ մոդելավորում/ Բանկի կողմից օգտագործվում է ներկա իրավիճակի հետագա զարգացումը կանխատեսելու համար: Սցենարների վերլուծության ընթացքում մշակվում են հակաքայլեր՝ արտաքին պայմանների աննպաստ փոփոխությունների դեպքում Բանկի վնասները նվազագույնի հասցնելու համար: